ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2023Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2023թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 4 023 672 200 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 960 702 547 դրամ, կամ 1-ին եռամսյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 23,9 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 723 787 100 դրամի դիմաց կատարվել է 386 693 747 դրամ կամ կատարվել է 22,4 %-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 263 273,7 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 270 970,59 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 21,4 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 10,0 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 24,9 %-ով, տեղական տուրքերը՝ 54,4 %-ով, պետական տուրքերը՝ 30,0 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 78 929,4 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 42 938,13 հազ. դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 18 000,0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 5 405,0 հազ. դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 573 209,2 հազ. դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 464 511,4 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 116 522,76 հազ. դրամ,կամ կատարվել է 25,1 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 12,3 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 51,7 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել են 799,6 հազ. դրամ՝ 3 998,0 հազ. դրամի դիմաց :

4. **Տեղական վճարների մասով** բյուջեում նախատեսված 369 883,7 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 78 385,27 հազ. դրամ կամ կատարվել է 21,2 %, որից աղբահանության վճարների մասով 165 010,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 29 555,9 հազ. դրամ կամ կատարվել է 17,9 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 24,8 %-ով:

<u>Ծախսեր</u>

2023 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին եռամսյակի ծախսերը կատարվել են 15,6 %-ով՝ 4 023 672,2 հազ. դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 627 310,8 հազ. դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 16,5 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 9,1 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 20,7 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 27,0 %-ով:

ե/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 11,9 %-ով:

զ/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 20,9 %-ով:

է/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 28,0 %-ով:

Մասիս համայնքի 2023թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 1 702 576,3 հազ. դրամի դիմաց կատարվել է 1 527 024.5 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 1 164 384.072 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 187 640.467 հազ. դրամ, բյուջեի վարչական մասից հատկացում ֆոնդային մասին՝ 175 000,0 հազ. դրամ:

2023 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 118 125,046 հազ. դրամ, որից՝

ա/ Համայնքային ենթակայության շենքերի , շինությունների կառուցման, հիմնանորոգման, համայնքային ճանապարհների, մայթերի կառուցման և հիմնանորոգման, բակերի, այգիների բարեկարգման համար, համայնքում առկա ոռոգման համակարգերի հիմնանորոգման, համայնքային ենթակայության մշակույթի տների կառուցման, հիմնանորոգման, հուշարձանների և մշակութային արժեքների պահպանման և վերանորոգման համար ծախսերը կազմել են 53 277,4 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, այլ մեքենա սարքավորումների, ոչ նյութական արժեքների համար ծախսերը կազմել են 64 146,629 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 701,0 հազար դրամ,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ